

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/83-3**

ք. Երևան

«17» հուլիս 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արշավիր Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը և կատարման ժամկետը յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առավագն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառու Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառու հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառու պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9282521,83 (ինը միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր քսանմեկ դրամ ութսուներեք լումա) << դրամ, որից 1547086.97 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար ութսունվեց դրամ ինսուսնյոթ լումա) << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ընդ որում՝

3-րդ չափաբաժին՝ 1762599,28 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր ինսուսնինը դրամ քսանութ լումա) << դրամ՝ որից 293766,55 (երկու հարյուր ինսուսներեք հազար յոթ հարյուր վաթսունվեց դրամ հիսունհինգ լումա) << դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին՝ 3094083,56 (երեք միլիոն ինսուսնչորս հազար ութսուներեք դրամ հիսունվեց լումա) << դրամ՝ որից 515680,59 (հինգ հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր ութսուն դրամ հիսունինը լումա) << դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժին՝ 4425838,99 (չորս միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսունութ դրամ ինսուսնինը լումա) << դրամ՝ որից 737639,83 (յոթ հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր երեսունինը դրամ ութսուներեք լումա) << դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂՁԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

ՀՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
Մ. Ս. ՄԱՐԿՅԱՆ

37

Պատվիրատու

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«Հ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
«Հ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն»


«Ալ ԵՎ ԱՐ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 20փ., 20/1, բն.6
Հեռ.՝ +37495532201
«ԷՎՈԿԱՐԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660015555220100
ՀՎՀՀ 00471629

Հ/Հ
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քննիչուղարի տեղակալ՝

Տնօրեն՝


Գալստյան
(ստորագրություն)


«ԱԼ ԵՎ ԱՐ» Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

02698732

S00471629

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել «Օրենսդրությանը չհակասող դրույթներ»:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 3. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-3

**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 80 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
 ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափում միավոր	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը	
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		<u>«Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ</u>				
		<u>Բաժին-1</u>				
		<u>Ղասասենյակի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E9-34 K1=0.6 K2=0.7 K3=0.5	Մուտքի մետաղական դռան ապամոնտաժում	մ2	2.30	1.73	3.98
2	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ2	69.90	0.21	14.68
3	P11-80	Սոսնձաներկի մաքրում առաստաղներից	մ2	45.60	0.26	11.86
4	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6.00	0.40	2.40
5	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	1.20	2.50	3.00
		Ընդամենը				35.91
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	շուկա	Ալյումինե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամրջակով, դռների տեղադրում	մ2	2.30	75.00	172.50
2	E10-103	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 35սմ լայնությամբ	մ2	2.00	2.00	4.00
3	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը, b=35սմ (կաղնեգույն)	գմ	5.60	3.00	16.80
4	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ2	14.00	0.20	2.80
5	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	189.50	1.00	189.50

6	P11-187	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	մ2	9.20	0.40	3.68
7	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	99.30	1.10	109.23
8	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	6.00	4.50	27.00
		Ընդամենը				525.51
		Ընդամենը՝ Բաժին-1				561.42
		<u>Բաժին-2</u>				
		<u>Սան. հանգույցի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E46-87	Մետաղապլաստե միջնորմների քանդում	մ2	4.00	3.00	12.00
2	E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ2	1.40	1.00	1.40
3	E46-124	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ2	3.60	1.20	4.32
4	E46-79	Քարե պատի քանդում	մ3	0.40	8.00	3.20
5	P13-5	Հախճասալի քանդում պատերից	մ2	30.80	0.30	9.24
6	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ2	17.60	0.10	1.76
7	E46-109	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	մ2	9.40	0.20	1.88
8	E46-119 E46-120	Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ	մ2	9.40	0.20	1.88
9	P19-69	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2.00	0.50	1.00
10	P19-70	Զուգարանակոնցի ապամոնտաժում	հատ	2.00	0.50	1.00
11	P19-74	Հոսակի ապամոնտաժում	հատ	1.00	0.50	0.50
12	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	4.60	1.50	6.90
		Ընդամենը				45.08
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	E10-105	Հաճարենու փայտից դռների տեղադրում, ներսի	մ2	1.80	34.00	61.20
2	E15-260	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ2	29.80	2.30	68.54
3	E15-82	Պատերի երեսապատում հախճասալով	մ2	29.80	8.00	238.40
4	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	17.60	2.30	40.48
5	E11-55 E11-56	Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ	մ2	9.40	2.50	23.50
6	E11-135	Խեցեսալե հատակների պատրաստում	մ2	9.40	5.50	51.70
7	E34-389 K=0.5	Կախովի առաստաղի իրականացում ՊՎՔ նյութից	մ2	9.20	5.00	46.00

8	շուկա	Սան. հանգույցում այլումինե բռնածողի տեղադրում	զմ	0.80	5.00	4.00
9	8-605-1	Կախովի լուսատուների մոնտաժում	հատ	4.00	4.00	16.00
10	8-402-2	Հաղորդալար պղնձե ՈՍԻՑ 3x1.5մմ ²	զմ	20.00	0.30	6.00
11	8-591-2	Անջատիչ մեկստեղնավոր	հատ	1.00	1.90	1.90
12	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	1.00	0.6000	0.60
13	շուկա	Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	1.00	0.91	0.91
		Ընդամենը				559.23
		<u>Սառը ջրամատակարարման համակարգ</u>				
1	E16-261	de20 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	9.80	0.60	5.88
2	E22-312	խողովակաշարի լվացում ախտահանումով	կմ	0.0098	0.70	0.01
3	E16-50	D=15x2.5մմ պողպատե էլ. եռակցվող խողովակատոր միակողմանի արտաքին պարուրակով (L=0.2մ), փորձարկումով, 1հատ	զմ	0.20	13.00	2.60
4	12-811-1	DN15 արույրե գնդային փականի մոնտաժում	հատ	1.00	2.00	2.00
5	12-811-1	DN15 լատունե շառավղային փականի մոնտաժում	հատ	3.00	1.80	5.40
6	շուկա	Մետաղական de20xDN15 պարուրակով կցորդիչի մոնտաժում	հատ	2.00	1.50	3.00
7	շուկա	de20, α=90° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	2.00	1.00	2.00
8	շուկա	de20xDN15, α=90° ներքին պարուրակով պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	3.00	1.00	3.00
9	շուկա	de20 պոլիպրոպիլենե եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2.00	1.00	2.00
10	E15-614	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի ներկում 2 շերտ	մ ²	0.20	5.00	1.00
11	E22-397	Մ25xՄ15 պողպատե խողովակների միացում էլ. եռակցմամբ	տեղ	1.00	3.00	3.00
12	շուկա	de20 խողովակների պատերին ամրացման խամուրների մոնտաժում	հատ	13.00	0.23	2.99
		Ընդամենը				32.88
		<u>Ջրահեռացման համակարգ</u>				
1	E16-34	Φ100 կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	2.50	1.50	3.75
2	E16-33	Φ50 կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	զմ	3.10	1.00	3.10
3	E22-365	Φ100, α=90° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	4.00	0.80	3.20
4	E22-365	Φ100, α=45° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	6.00	0.60	3.60
5	E22-365	Φ50, α=90° պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	5.00	0.50	2.50

6	E22-365	Φ50, α=45' պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում	հատ	7.00	0.50	3.50
7	E22-366	Φ100 պոլիպրոպիլենե թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	3.00	1.70	5.10
8	E22-366	Φ50 պոլիպրոպիլենե թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	4.00	0.60	2.40
9	E22-366	Φ100xΦ50 պոլիպրոպիլենե անցումային թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2.00	1.80	3.60
10	E22-365	Φ100 պոլիպրոպիլենե մաքրիչի մոնտաժում	հատ	1.00	2.20	2.20
11	E22-365	Φ50 պոլիպրոպիլենե մաքրիչի մոնտաժում	հատ	1.00	2.20	2.20
12	E22-365	Զուգարանակոնքի թողարկի կցորդիչի մոնտաժում	հատ	1.00	2.20	2.20
13	E22-365	Կոյուղու ձկուն կցորդիչի մոնտաժում Φ100	հատ	1.00	2.20	2.20
14	E22-365	Կոյուղու ձկուն կցորդիչի մոնտաժում Φ50	հատ	1.00	2.20	2.20
15	շուկա	Φ100 խողովակների պատերին ամրացման խամուրների մոնտաժում	հատ	2.00	1.20	2.40
16	շուկա	Φ50 խողովակների պատերին ամրացման խամուրների մոնտաժում	հատ	2.00	1.05	2.10
		Ընդամենը				46.25
		<u>Սանիտարական սարքեր</u>				
1	E17-28	Լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը	կ-տ	1.00	22.50	22.50
2	E17-61	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով	կ-տ	1.00	24.00	24.00
3	E17-38 կիր.	Լվացման ծորակների տեղադրում	կ-տ	1.00	3.00	3.00
4	E17-36	Հոսակների տեղադրում Φ50մմ	կ-տ	1.00	2.35611	2.36
5	շուկա	Թղթի կախիչ	հատ	1.00	1.00	1.00
6	շուկա	Օճառաման	հատ	1.00	1.00	1.00
7	Ինֆ. տեղ.	Հայելի	հատ	1.00	5.00	5.00
		Ընդամենը				58.86
		Ընդամենը՝ Բաժին-2				742.29
		Ընդամենը				1303.71697
		Շահույթ, 11%				143.40887
		Ընդամենը				1447.12584
		Չնախատեսված ծախսեր 1.5%				21.70689
		Ընդամենը				1468.83273
		ԱԱՀ, 20%				293.76655
		Ընդամենը				1762.59928

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Ծովակալ-Իսակովի 2/1 հասցեում:

Չափաբաժին 4. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-4

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 163 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Շինարարական կոդ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Միավոր	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		«Երևանի հ.163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				
		Բաժին-1				
		<u>Դասասենյակի շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E46-124	Փայտե դռների ապամոնտաժում	մ2	2.00	1.800	3.60
2	E46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգերի հետ միասին	մ2	7.20	0.600	4.32
3	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ2	47.60	0.200	9.52
4	P11-80	Յուղաներկի մաքրում պատերից	մ2	40.80	0.300	12.24
5	P11-80	Սոսնձաներկի մաքրում առաստաղներից	մ2	54.40	0.200	10.88
6	E46-103	Մանրահատակի քանդում	մ2	54.40	0.300	16.32
7	E46-119 E46-120	Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ	մ2	54.40	0.500	27.20
8	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	12.00	0.500	6.00
9	C310-15 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ	տ	5.80	2.500	14.50
		Ընդամենը				104.58
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	E10-107	ՄՂՖ դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/	մ2	2.00	20.00	40.00
2	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով, 60մմ հաստ., 4+4մմ ապակեկաթեթով, բացվող	մ2	2.60	34.00	88.40
3	շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, սպիտակ, արտերկրյա պրոֆիլներով, 60մմ հաստ., 4+4մմ ապակեկաթեթով, չբացվող	մ2	4.70	29.00	136.30
4	E10-	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 15սմ	մ2	0.60	3.33	2.00

	103	լայնությամբ				
5	շուկա	Պլաստմասե պատուհանագոգի արժեքը, b=15սմ	գմ	3.90	1.54	6.01
6	P14-380	Պատերի քսահարթում գիպսոնիտով	մ2	17.70	0.85	15.05
7	E15-664	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	88.40	1.20	106.08
8	P11-187	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	մ2	10.90	0.55	6.00
9	E15-665	Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ	մ2	54.40	1.19	64.74
10	E11-55 E11-56	Հատակների ցեմենտավազե հարթեցնող շերտի իրականացում h=50մմ	մ2	54.40	1.38	75.07
11	E11-191 կիր.	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա, ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ2	54.40	8.00	435.20
12	8-603-1	Լուսատու առաստաղային 30վտ LED, 1250x250	հատ	6.00	8.00	48.00
13	E46-57	Ակոսների փորում պատերում	գմ	75.00	0.33	24.75
